

ճանի Բագուի մէջ, 5 Հոկտ. 1899ին. 1901ին կտակարարին կնոջ կը զրկուի Օրհնուրեան Կոնդակ մը. իր ժողովրդական անունն էր Գրիգոր սպիտ. (Արձնգր. Տն. ժողովի, 1899, էջ 47):

## Դ

ԴԱՆԻԷԼ ՅՈՒՆԱՆԵԱՆՑ, ՌՈՍՏՈՎՑԻ.— 1899ին իր ծախքովը Ս. Յակոբի տպարանէն հրատարակել կուտայ Կիպրիանուսի աղօրագիրքը. (Արձնգր. Տն. ժողովի, նիստ ՄԺԹ. 1899, էջ 47): Ս. Գերեզմանի զարգարանքին համար 1900 ին կը նուիրէ գունատր կանթեղներ և 1901 ին ալ կ'ստանայ Օրհնուրեան Կոնդակ:

## Ե

ԵՂԻՍ. ՅԱԿՈՒԲԵԱՆ, ՀԱԼԷՊՑԻ.— 1799 ին Բաթաւիոյ մէջ կը շինէ իր կտակագիրը եւ ամբողջ հարստութիւնը 80,000 ռուբլի կը կտակէ այլևայլ կրօնական հաստատութիւններու. Ս. Յակոբի վանքն ալ ունի բաժին մը նոյն կտակեալ գումարէն: Յիշեալը կտակակատար կարգած է Ֆրէտէրիկ Վինքլման եւ Աբրահամ Աւետմալ կոչուած անձերը: Կտակին կը վկայեն Գէորգ մանուկ, Յարութիւն Զաքար եւ Ամիրջան Ոսկան: 1813 Մարտ 11 ին Պասրայի մէջ կտակագիրը կ'օրինակէ Կարապետ Յովհաննէսեան (Հիւսիսախաղ, 1859, էջ 394-399):

ԵՆՈՎՔ ԳԱԼՍՏԵԱՆ, ԲՈՒՏԱՂԵԱՆՑ, ԲԱԳՈՒՑԻ.— 1900ին Ս. Յակոբի վանքին կը կտակէ 15000 ռուբլի, սա պայմանաւ որ Երուսաղէմի մէջ կառուցուի անշարժ կալուած մը (Արձնգր. Տն. ժողովի, նիստ, ԼԴ. 1900, էջ 273). կը վախճանի նոյն տարին: Յիշեալը 20,000 ռուբլի ալ կտակած է Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան, տոկոսը աստուածահաճոյ գործերու յատկացնելով, եթէ նոյն ընկերութիւնը լուծուի՝ կտակեալ գումարը պիտի ստանայ Ս. Յակոբի վանքը (անդ. էջ 279):

ԵՍՍՅԻ ԱՆՏՈՆԵԱՆ, ՍՄԻՐՆՈՎ.— 1830ին Ս. Յակոբի վանքին կտակած է 500 հատ աստիգնացի ռուբլի, 20666 թիւ տոմսակով, որ պահ կը մնար Մոսկուայի դրամատունը, Լազարեանց հսկողութեան տակ: Ս. Էջմիածնի Սինոդը նոյն տոմսը Լազարեաններէն ստացած ըլլալով՝ Յովհաննէս պարք. 1858